

«ՅՈՒՆԻԲԱՆԿ»
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒՂԵՐՁԸ.....	3
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒՂԵՐՁԸ ԵՎ ԶԵԿՈՒՅՑԸ	6
ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՆՈՆԱԳՐՔԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	10
ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	11
ԲԱՆԿԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ.....	16
ՇԱՀԱԳՐԳՈՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՄԲ (ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ) ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ.....	19
ԲԱՆԿԻ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԶԵԿՈՒՅՑԸ.....	20
<i>Հավելված 1. Բանկի վարչակազմակերպական և կորպորատիվ կառուցվածքի նկարագրությունը</i>	23
<i>Հավելված 2. Նշանակալից մասնակիցների, այդ թվում՝ իրական շահառուների մասին տեղեկատվություն</i>	24
<i>Հավելված 3. Խորհրդի անդամների հակիրճ կենսագրությունը</i>	25
<i>Հավելված 4. Գործադիր մարմնի (անհատական կամ ընդհանուր) տարեկան վարձատրության վերաբերյալ տեղեկատվությունը և վարձատրության կապը կայունության կորպորատիվ թիրախների հետ</i>	29
<i>Հավելված 5. Բանկի բաժնետոմսերի քանակը, որոնք հանդիսանում են խորհրդի և գործադիր մարմնի անդամների սեփականությունը</i>	31
<i>Հավելված 6. Աուդիտորական կազմակերպության անվանումը և վարձատրությունը, ինչպես նաև դրա անկախության փաստի ստուգման արդյունքները</i>	32
<i>Հավելված 7. Բանկի կողմից թողարկված և տեղաբաշխված բաժնետոմսերով ամրագրվող իրավունքները՝ ըստ դրանց տեսակների (դասերի)</i>	33
<i>Հավելված 8. Կորպորատիվ կառավարման վերաբերյալ Բանկին և խորհրդին խորհրդարարական ծառայություններ, այդ թվում՝ խորհրդի գնահատման, խորհրդի անդամի ներգրավման գծով ծառայություններ մատուցած անձանց մասին տեղեկատվությունը և վարձատրությունը</i>	35
<i>Հավելված 9. Կորպորատիվ կառավարման տարեկան հայտարարագիրը</i>	36

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒՂԵՐՁԸ



Հարգելի բաժնետերեր, գործընկերներ և հաճախորդներ,

2024 թվականը Յունիբանկի համար դարձավ վստահ և կայուն աճի զարգացման տարի: Մենք նշանակալի արդյունքների հասանք մեր գործունեության բոլոր հիմնական ուղղություններում, ամրապնդեցինք մեր դիրքերը շուկայում և հավատարիմ մնացինք մեր գլխավոր նպատակին՝ լինել հուսալի, նորարարական և հաճախորդի կարիքներին միտված ֆինանսական գործընկեր:

Տարին փակեցինք 8,2 մլրդ դրամ շահույթով, որից 7,8 մլրդ դրամը ծրագրված է ուղղել շահաբաժինների վճարմանը. գրեթե կրկնակի ավելի՝ անցած տարվա համեմատ: Բաժնետոմսերի հաջող տեղաբաշխման շնորհիվ Բանկի կապիտալն աճել է 9%-ով՝ գերազանցելով 44.2 միլիարդ դրամը:

Սեփական կապիտալի շահութաբերությունը (ROE) աճել է 7.3 տոկոսային կետով և կազմել 18.8%:

Moody's գործակալությունը Յունիբանկի ազգային և արտարժույթով ավանդների երկարաժամկետ վարկանիշները բարձրացրել է մինչև B1 մակարդակի՝ կայուն հեռանկարով, ինչը վկայում է Բանկի ֆինանսական դիրքի ամրապնդման և հաճախորդների ու ներդրողների համար հուսալիության մասին: Վարկանիշների բարձրացումը պայմանավորված է վերջին երկու տարիների ընթացքում վարկային պորտֆելի որակի և բանկի շահութաբերության զգալի բարելավմամբ:

Նշանակալի հաջողությունների ձեռքբերումը մեծապես պայմանավորված է «Առողջ ֆինանսներ՝ վստահ ապագա» մարտավարության զարգացմամբ: Դա սուկ կարգախոս չէ, դա մեր գործունեության հիմքն է: Մեր բոլոր գործիքներն ու ֆինանսական լուծումները նպաստում են բանկային ծառայությունները հաճախորդի համար մատչելի և օգտակար դարձնելուն: Մեր մարտավարության նպատակն է՝ օգնել մարդկանց կայացնել գիտակցված և արդյունավետ որոշումներ: Այդ խնդրի իրականացման համար մենք՝

- մշակում և զարգացնում ենք բոլորին հասանելի և հասկանալի ծառայություններ,
- աջակցում ենք ֆինանսական գրագիտության բարձրացմանը,
- օգնում ենք վստահ ապագայի ապահովմանն ուղղված ֆինանսական պլանավորման մշակմանն ու իրագործմանը:

2024 թվականին Յունիբանկը նշանակալի քայլ կատարեց թվային վերափոխման ուղղությամբ: Մենք ընդլայնեցինք UNIMobile հավելվածի ֆունկցիոնալությունը, որը հաճախորդներին հնարավորություն է տալիս հեշտությամբ լուծել ամենօրյա ֆինանսական խնդիրները: Հաշվետու տարում UNIMobile հավելվածի օգտատերերի թիվը 2023 թվականի համեմատ աճել է գրեթե 3 անգամ:



Թվայնացման հաջորդ փուլը UNIBusiness Mobile հավելվածի գործարկումն էր իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար: Հավելվածն ապահովում է հաշիվների հետ աշխատելու, միջազգային փոխանցումներ իրականացնելու, կոնտրագենտներին և բյուջեին վճարումներ կատարելու լայն ֆունկցիոնալություն, ինչը զգալիորեն պարզեցնում և արագացնում է բիզնես հաճախորդների սպասարկումը:

Յունիբանկը նաև գործարկեց ինտերնետ էքվայրինգի ծառայություն, որին միանալով՝ ձեռնարկատերերը կարող են ընդունել առցանց վճարումներ կայքում և ինտերնետ-խանութներում:

2024 թվականին Բանկի կողմից թողարկված ակտիվ քարտերի թիվն աճել է 37%-ով, աշխատավարձային նախագծերի շրջանակներում դրանց թիվն աճել է 76%-ով, իսկ գործարքների ծավալի աճը հասել է 51%-ի:

Հաշվետու տարում Բանկի մանրածախ վարկային պորտֆելը աճել է 36%-ով: Վարկային սքրինգի մեջ արհեստական բանականության տեխնոլոգիայի կիրառման շնորհիվ բանկը շարունակել է ակտիվորեն զարգացնել և ընդլայնել վարկավորումը՝ պահպանելով իր առաջատար դիրքը POS վարկերի քանակով:

Սքրինգի նորարարական մոդելը նպաստում է վարկերի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացի օպտիմալացմանը և բարձրացնում է ռիսկերի գնահատման որակը:

Յունիբանկը դարձել է Արցախի առանձին շրջաններից տեղահանված ընտանիքների համար բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության ծրագրի հիմնական մասնակիցներից մեկը: 2024 թվականին հիփոթեքային վարկերի պորտֆելը գրեթե կրկնապատկվել է:

Յունիբանկը նաև հատուկ ուշադրություն է դարձնում բիզնես լիզինգի զարգացմանը և ակտիվորեն ընդլայնում է իր հնարավորություններն այդ ոլորտում:

2024 թվականին Յունիբանկը ստեղծեց UBPay դրամական փոխանցումների հայաստանյան վճարահաշվարկային համակարգը: UBPay-ն արդեն զբաղեցնում է Հայաստանի դրամական փոխանցումների շուկայի ավելի քան 24%-ը, իսկ 2027 թվականի վերջին նախատեսում է հասնել 55%-ի:

2024 թվականին զարգացած մեկ այլ ուղղություն է Unibank Invest ներդրումային հարթակը, որն անհատ և կորպորատիվ հաճախորդներին առաջարկում է անմիջական մուտք միջազգային բորսաներ: Բոլոր գործարքները կարող են իրականացվել ժամանակակից վեբ տերմինալի կամ մոբայլ հավելվածի միջոցով:

Մեր երկարաժամկետ ռազմավարության հիմնական առաջնահերթություններից մեկը Բանկի ներդրումային գրավչության բարձրացումն է և մուտքը միջազգային շուկաներ: 2024 թվականին մենք հաջողությամբ տեղաբաշխեցինք բաժնետոմսերի 7-րդ թողարկումը՝ 4 միլիարդ դրամի չափով: Հաշվետու տարում Բանկի կողմից թողարկված պարտատոմսերի ծավալն աճել է 61%-ով:

Յունիբանկն առաջինն էր Հայաստանում, որը 2024 թվականին թողարկեց ստորադաս պարտատոմսեր և տեղաբաշխեց դրանք նախատեսվածից շուտ, ինչը վկայում է հանրային բարձր վստահության մասին: AMX AWARDS 2024 մրցանակաբաշխության ժամանակ Յունիբանկը ճանաչվեց լավագույնը երկու անվանակարգերում՝ «Best Equity Issuer on the Exchange» և «Best in Secondary Equity Market»:

Ամբողջ տարվա ընթացքում Յունիբանկն ակտիվ մասնակցություն է ունեցել երկրի հասարակական կյանքին և նպաստել հովանավորչական, բարեգործական և սոցիալական ծրագրերին: Այս գործունեությունը շարունակական է լինելու: Յունիբանկը Հայաստանի ըմբշամարտի ֆեդերացիայի գլխավոր հովանավորն է, ավանդաբար աջակցում է Սիսիանում ծյուղոյի մրցաշարերի անցկացմանը: Այս տարի Բանկը դարձավ նաև «Ուրարտու» ֆուտբոլային ակումբի տիտղոսային հովանավորը:

Իր սոցիալական պատասխանատվության շրջանակներում Յունիբանկն օգնություն է ցուցաբերել Արցախից բռնի տեղահանված անձանց: Բանկը մասնակցել է «Քեզ համար, Հայաստան» հեռուստամարաթոնին, ֆինանսական աջակցություն է տրամադրել կայուն զարգացմանն ու ESG նախաձեռնություններին նվիրված համաժողովի կազմակերպմանը: Մեր երկարաժամկետ ծրագրերը ներառում են կրթության, մշակույթի և արվեստի գործիչների հետագա աջակցությունը, ինչպես նաև սպորտի և առողջ ապրելակերպի մասսայականացումը:

Վստահ եմ, որ մեր համատեղ ջանքերի շնորհիվ 2025 թվականին մենք կհասնենք նոր բարձունքների, կամրապնդենք մեր դիրքերը շուկայում և կշարունակենք պահպանել մեր ծառայությունների բարձր որակի չափանիշները: Շնորհակալություն վստահության և արդյունավետ համագործակցության համար:

ԳԱԳԻԿ ԶԱՔԱՐՅԱՆ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ համահիմնադիր, Խորհրդի նախագահ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒՂԵՐՁԸ ԵՎ ԶԵԿՈՒՅՑԸ

Հարգելի տիկնայք և պարոնայք,



2024 թվականը Յունիբանկի համար նշանավորվեց կայուն զարգացմամբ, ինչպես նաև գործառնական արդյունավետության բարձրացմանը, գործընթացների ավտոմատացմանը, շուկայական դիրքերի ամրապնդմանն ուղղված հավասարակշռված ռազմավարությամբ: Բանկն ապահովեց կայուն աճ՝ պահպանելով վստահությունը հաճախորդների և գործընկերների շրջանում:

Հաշվետու տարում հիմնական ուշադրությունը կենտրոնացվել է կորպորատիվ կառավարման համակարգի շարունակական կատարելագործման, ռիսկերի կառավարման համակարգի և ներքին հսկողության համակարգի արդյունավետության բարձրացման, ինչպես նաև Բանկի ներդրումային ակտիվության ընդլայնման շուրջ:

Կորպորատիվ կառավարման համակարգի հետևողական զարգացման և հաճախորդների սպասարկման որակի բարձրացման գործընթացի շրջանակներում հաշվետու տարում կյանքի են կոչվել անկախ խորհրդատուներ՝ միջազգային KPMG ընկերության և Civitta ընկերության առաջարկները, որոնք միտված են կորպորատիվ կառավարման համակարգի բարելավմանը, ինչպես նաև ներքին գործընթացների կազմակերպման և հաճախորդների հետ փոխգործակցության մասով լավագույն համաշխարհային փորձի ինտեգրմանը:

Հետևելով տեխնոլոգիական փոխակերպման երկարաժամկետ ռազմավարությանը՝ Յունիբանկը նախաձեռնել է նաև SS ենթակառուցվածքի արդիականացմանը, հիմնական բիզնես գործընթացների ավտոմատացմանը, ինչպես նաև հաճախորդների հետ փոխգործակցության թվային ուղիների զարգացմանն ուղղված համալիր միջոցառումներ: Բանկը հաջողությամբ անցել է տեղեկատվական անվտանգության և հաճախորդների անձնական տվյալների պաշտպանության ստանդարտներին համապատասխանության վերահավաստագրման աուդիտ:

2024 թվականը Յունիբանկն ամփոփել է 8.2 մլրդ ՀՀ դրամ զուտ շահույթով: Բանկի ընդհանուր կապիտալը կազմել է 44.2 մլրդ ՀՀ դրամ, Բանկի կապիտալի համարժեքության գործակիցը կազմել է 15.16%, ինչը գերազանցում է ՀՀ կենտրոնական բանկի սահմանած նվազագույն մակարդակը (11%):

Բանկի ակտիվներն աճել են 16.5%-ով՝ կազմելով 337 մլրդ ՀՀ դրամ: Վարկային ներդրումները կազմել են 204 մլրդ ՀՀ դրամ, աճը՝ նախորդ տարվա համեմատ կազմել է 36%:

Բանկի մանրածախ վարկային պորտֆելն աճել է 36%-ով և գերազանցել է 147 մլրդ ՀՀ դրամը: Վարկավորման ճկուն պայմանների և գործընկերային լայն ցանցի շնորհիվ Յունիբանկը շուկայում առաջատարի դիրք է զբաղեցնում POS-վարկերի քանակով:

Հիփոթեքային ծրագրերի լայն շրջանակի և Հայաստանի առաջատար շինարարական

ընկերությունների հետ ակտիվ համագործակցության շնորհիվ Բանկում հիփոթեքային վարկավորման ծավալն աճել է 93%-ով, պորտֆելը գերազանցել է 62 մլրդ ՀՀ դրամը՝ միաժամանակ ունենալով ժամկետանց պարտավորությունների ամենացածր մասնաբաժինը՝ 0.1%:

Արցախի առանձին շրջաններից բռնի տեղահանված ընտանիքների համար բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության ծրագրի շրջանակներում Բանկը 500-ից ավելի ընտանիքների տրամադրել է ավելի քան 6 մլրդ ՀՀ դրամ գումարի չափով հիփոթեքային վարկեր:

Բանկի կորպորատիվ վարկային պորտֆելն աճել է 35%-ով՝ կազմելով 56.2 մլրդ ՀՀ դրամ: Վարկավորման ծավալների աճին զուգահեռ՝ պահպանվել է կորպորատիվ պորտֆելի բարձր որակը, թարմացվել է գրավով չապահովված միկրովարկավորման սքորինգային մոդելը: Հանրության և ՓՄՁ-ների բարձր վստահության մասին է վկայում հաճախորդների հաշիվներում և ավանդներում տեղաբաշխված միջոցների ծավալի աճը՝ 18%: Առաջնահերթություններից մեկը շարունակում էր մնալ միկրո, փոքր և միջին բիզնեսին աջակցությունը:

Բանկի մասնաճյուղային ցանցի օպտիմալացման քաղաքականության շրջանակներում իրականացվել է չորս մասնաճյուղերի տարածքների համալիր բարեկարգում, բացվել են «Դավմա» և «Բայրոն» մասնաճյուղերը Երևան քաղաքում, ինչպես նաև աշխատանքներ են տարվել «Գոգավան» նոր մասնաճյուղը բացելու ուղղությամբ:

2024 թվականին շարունակվել են թղթակցային հարաբերությունների ընդլայնման և դիվերսիֆիկացման ուղղությամբ համակարգային աշխատանքները, հաստատվել են հարաբերություններ Միջին, Կենտրոնական և Հարավային Ասիայի, Եվրոպայի երկրների նոր կոնտրագենտների հետ:

Բանկը ռիսկերի կառավարման և աճի պլանավորման հարցում պահպանել է պահպանողական մոտեցում, ինչը նպաստում է Բանկի բիզնես մոդելի կայունությանը և անընդհատ փոփոխվող շուկայական պայմաններին հարմարվողականությանը:

Վարկային ռիսկի առումով, վարկային պորտֆելի որակը տարվա ընթացքում մնացել է կայուն. 90 և ավել օր ժամկետանց վարկերի բաժինը ընդհանուր վարկային պորտֆելում կազմել է 1.0% (ընդ որում՝ ֆիզիկական անձանց մասով այն կազմել է 1.4%, իրավաբանական անձանց մասով՝ 0.2%): Չաշխատող վարկերի առումով Բանկի վարկային պորտֆելի որակը փոքր-ինչ գերազանցում է բանկային ոլորտի միջին ցուցանիշը (վարկային պորտֆելի 1.09%-ը՝ 1.0%-ի դիմաց), ինչը պայմանավորված է պորտֆելում փոքրածավալ չապահովված սպառողական վարկերի բաժինով: Ակնկալվում է, որ 2025 թվականին ժամկետանց վարկերի մակարդակը համադրելի կլինի 2024 թվականի ցուցանիշների հետ: Բանկում հիմնական կենտրոնացումը գրանցվել է ֆիզիկական անձանց տրամադրվող վարկերի պորտֆելում, շինարարության ոլորտի վարկերում և հիփոթեքային վարկերում: Վարկային ռիսկի կառավարման առումով պարբերաբար իրականացվում են տարբեր սեգմենտների վարկառուների սթրես-թեստեր, պարբերաբար թեստավորում և բարելավում է նաև

վարկերի հաստատման սքորինգային համակարգը:

Բանկի իրացվելիությունը գտնվում է ընդունելի մակարդակի վրա, և իրացվելիության ռիսկը գնահատվում է ցածր: Իրացվելիության ռիսկի ներքին սահմանաչափերը խախտվում են միայն շատ խիստ սթրեսային սցենարներում, որոնց հավանականությունը գնահատվում է չափազանց ցածր:

Արտարժութային ռիսկի առումով, Բանկը խիստ հսկողություն և կառավարում է իրականացնում արժութային ռիսկերի նկատմամբ: Ռիսկը գնահատվում է որպես ցածր:

Գործառնական ռիսկերի առումով, տարվա ընթացքում գրանցված գործառնական ռիսկի պատահարների պատճառ են եղել ներքին գործընթացների թերությունները, համակարգի խափանումները, աշխատակիցների դիտավորյալ կամ ոչ դիտավորյալ սխալները, ինչպես նաև արտաքին գործոնները: Դրանց զծով Բանկն էական վնասներ չի կրել: Գործառնական ռիսկերը նվազագույնի հասցնելու համար իրականացվում են համապարփակ աշխատանքներ, ներառյալ ներքին իրավական ակտերի վերանայումը, բոլոր գործընթացների քարտեզագրումը և յուրաքանչյուր գործընթացի հետ կապված ռիսկերի գնահատումը:

Բնապահպանական, սոցիալական և կառավարման հարցերը, դրանց հետ կապված ռիսկերը կարևոր են Բանկերի համար, քանի որ դրանք անմիջականորեն ազդում են բիզնեսի կայունության և աճի վրա: Բանկերի համար կայուն զարգացումը տնտեսական և նույնիսկ գոյաբանական ասպեկտ է, որը հանգեցնում է նոր տեսակի ռիսկի, որը պահանջում է ինտեգրված մոտեցում ռիսկերի կառավարման համակարգում, և քանի որ այն տարբեր աստիճաններով ազդում է Բանկում առկա ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի վրա, հետևաբար դրանց պատշաճ հաշվառումը կենսական նշանակություն ունի Բանկի համար: Այն թույլ է տալիս կառուցել դիմադրողականություն, ավելի լավ կանխատեսել մարտահրավերները և համապատասխանեցնել ռազմավարությունները:

Կայուն զարգացման ESG սկզբունքներն ու մոտեցումները աստիճանաբար ներառվում են Բանկի բիզնես գործընթացներում, իսկ կորպորատիվ ռազմավարության երկարաժամկետ վերափոխման հարցերը ներառված են Բանկի Խորհրդի և Վարչության օրակարգում: Ռիսկերի կառավարման համակարգում ինտեգրումից բացի, Բանկում հաշվի են առնում նաև դրանց հետ կապված հարցերը՝ նոր գործիքներ և ծառայություններ մշակելիս, դրանց գնագոյացման և վաճառքի որոշումներ կայացնելիս:

Բանկն իր բիզնես մոդելով մշտապես ձեռնպահ է մնացել սոցիալական և բնապահպանական ռիսկեր պարունակող նախագծերի ֆինանսավորումից: Հաճախորդի գործունեությունը գնահատելիս, ավանդական ֆինանսական վերլուծության հետ մեկտեղ, Բանկը սկսել է ներդնել պարամետրեր, որոնք հաշվի են առնում բիզնեսի սոցիալական և շրջակա միջավայրի վրա ազդեցությունը, վարկառուներին խրախուսելով՝ կառուցել իրենց բիզնեսը ESG սկզբունքների հիման վրա:

2025 թվականին մենք կշարունակենք որդեգրված ռազմավարության շրջանակներում Յունիբանկի առաջխաղացումը, առաջնորդվելով պատասխանատու բանկային գործելակերպով և

ESG սկզբունքներով՝ նպատակով ունենալով հասնելու 12 մլրդ դրամ ՀՀ զուտ շահույթի:

Բանկի զարգացման հիմնական ուղղությունները և խթանները լինելու են՝

- **բարձր տեխնոլոգիականություն.** սպասարկման թվային գործիքակազմի ընդլայնում, ներքին գործընթացների արդյունավետության գնահատման և որոշումների օպերատիվ կայացման վերլուծական գործիքների ինտեգրում, ֆրոնթ-օֆիսային և բեք-օֆիսային համակարգերի գործառույթային հնարավորությունների թարմացում, վճարային ծառայությունների զարգացում:

- **արդյունավետություն.** բիզնես գործընթացների օպտիմալացում և ավտոմատացում, ծախսերի կրճատում, մարժայի մեծացում:

- **շուկայում դիրքերի ամրապնդում.** հաճախորդների բազայի և գործիքակազմի ընդլայնում, առաջնահերթ սեգմենտներում մասնաբաժնի աճ, հաճախորդների ակտիվ արդյունավետ մարքեթինգային հաղորդակցությունների իրականացում:

- **ներդրումային գրավչության բարձրացում.** ֆինանսական կայունության ամրապնդում և մուտք արժեթղթերի միջազգային շուկաներ, միջազգային գործակալության կողմից վարկային վարկանիշի ստացում, համապատասխանություն ESG սկզբունքներին:

Ամփոփելով հաշվետու տարին, իմ խորհին շնորհակալությունն եմ հայտնում մեր բաժնետերերին, գործընկերներին և հաճախորդներին՝ վստահության, ներգրավվածության և աջակցության համար:

ՄԵՍՐՈՂ ՀԱԿՈՐՅԱՆ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ վարչության նախագահ

ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՆՈՆԱԳՐՔԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ 2025 թվականի մայիսի 27-ի Խորհրդի որոշմամբ 2025 թվականի հունիսի

30-ին կայացած Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի հաստատմանն է ներկայացվել Հայաստանի Հանրապետության Կորպորատիվ կառավարման կանոնագրքին

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ միանալու առաջարկը: Կորպորատիվ կառավարման կանոնագրքը, որի նպատակն է կառավարման արդյունավետության, թափանցիկության և հաշվետվողականության բարձրացումը, ներդրողների վստահության ամրապնդումը, գործարար միջավայրի զարգացումը հաստատվել է ՀՀ Էկոնոմիկայի նախարարի 30.07.2024թ. թիվ 1955-Ն հրամանով:

Կանոնակարգին միանալը պարտադիր է Հայաստանի ֆոնդային բորսայում ցուցակված ընկերությունների համար, որի վերաբերյալ որոշում ընդունելու իրավասությունը պատկանում է Բաժնետերերի ընդհանուր ժողովին:

Կանոնագրքին միացող կազմակերպությունը պարտավոր է յուրաքանչյուր ֆինանսական տարվա համար պատրաստել և մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա հունիսի 30-ը իր կայքէջում հրապարակել Կանոնագրքով նախատեսված տարեկան հաշվետվությունը, ինչպես նաև դրա մաս կազմող կորպորատիվ կառավարման զեկույցը և կորպորատիվ կառավարման տարեկան հայտարարագիրը՝ «**Հետևի՛ր կամ բացատրի՛ր**» սկզբունքի հիման վրա:

Բաժնետերերի ընդհանուր ժողովը որոշել է հաստատել Հայաստանի Հանրապետության Կորպորատիվ կառավարման կանոնագրքին «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ-ի միացումը՝ քվեարկության հետևյալ արդյունքներով.

Կողմ՝ 173.431.140 ձայն կամ մասնակիցների ձայների 90.68%

Դեմ՝ 0 ձայն

Ձեռնպահ՝ 47.680 ձայն կամ մասնակիցների ձայների 0.02%

Անվավեր՝ 99.928 ձայն:

ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

**ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Բանկի ֆինանսական հաշվետվությունները հրապարակված են Բանկի ինտերնետային կայքում՝ հետևյալ հղմամբ՝ <https://www.unibank.am/hy/finance/>



Անկախ աուդիտորի եզրակացություն

**«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

31 դեկտեմբերի 2024թ.



Անկախ աուդիտորի եզրակացություն

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street
Yerevan 0015
Republic of Armenia

T +374 10 50 09 64/61

Ֆրանս Թորնթոն ՖԲԸ
Երևան Պլազա բիզնես
կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9

Հեռ.՝ +374 10 50 09 64/61

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ (այսուհետ՝ Բանկ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման էական քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Բանկի՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պարասխառնագրությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Բանկից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՍԻ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ նշված պահանջների և ՀԷՄՍԻ կանոնագրքի համաձայն: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք, մեր մասնագիտական դատողության համաձայն, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն, և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք այդ հարցերի վերաբերյալ առանձին կարծիք չենք տրամադրում:



Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների նկարագրությունը ներկայացված է ֆինանսական հաշվետվությունների Ծանոթագրություն 4.6-ում, իսկ պարտքային ռիսկի վերլուծությունը՝ Ծանոթագրություն 36.1-ում:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի ձևավորումը համարվում է առդիտի առանցքային հարց՝ հաճախորդներին տրված վարկերի նշանակալի լինելու, ինչպես նաև արժեզրկման գնահատման հիմքում ընկած ենթադրությունների սուբյեկտիվության պատճառով: Տարբեր դատողությունների և ենթադրությունների կիրառումը կարող է հանգեցնել ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի գնահատման և ձևավորման էականորեն տարբեր արդյունքների, ինչը կարող է էական ազդեցություն ունենալ Բանկի ֆինանսական արդյունքների վրա:

Դատողությունների առանցքային ոլորտները ներառում են ՖՀՄՍ 9-ի կիրառման ժամանակ արժեզրկման որոշման պահանջների մեկնաբանումը, որը արտացոլվում է Բանկի՝ ակնկալվող պարտքային կորուստների մոդելում, վարկի որակի էական վատթարացման հետ կապված բացահայտումները, նաև ակնկալվող պարտքային կորուստների մոդելում օգտագործված ենթադրությունները, ինչպիսիք են երրորդ կողմի ֆինանսական վիճակը, ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերն ու կանխատեսվող մակրոտնտեսական գործոնները և լրացուցիչ միջոցներ կիրառելու անհրաժեշտությունը՝ արտացոլելու ընթացիկ կամ ապագա արտաքին գործոնները, որոնք պատշաճ կերպով հաշվի չեն առնվել ակնկալվող պարտքային կորուստների մոդելում:

Արժեզրկման մեթոդոլոգիայի հետ կապված իրականացվել են հետևյալ առդիտորական ընթացակարգերը.

- Ուսումնասիրվել է Բանկի՝ ՖՀՄՍ 9-ի հիման վրա արժեզրկման պահուստի ձևավորման քաղաքականությունը և համեմատվել է ՖՀՄՍ 9-ի պահանջների հետ:
- Գնահատվել է ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի որոշման ժամանակ օգտագործվող տեղեկատվության նկատմամբ վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավերությունը՝ ներառյալ վարկի ձևավորման պահին ստացված գործարքային տվյալները, վարկային որակի շարունակական ներքին գնահատումները, ակնկալվող պարտքային կորուստների մոդելի տվյալների և ինտերֆեյսի պահպանումը:
- Գնահատվել է ակնկալվող պարտքային կորուստների մոդելի նկատմամբ վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավերությունը՝ ներառյալ մոդելի կառուցումը և հաստատումը, շարունակական վերահսկումը/հավաստիացումը, մոդելի կառավարումը և թվաբանական ճշգրտությունը:
- Ստուգվել է Բանկի՝ պարտքային ռիսկի էական աճի որոշման և ռիսկերի հավվածությունը տարբեր փուլերում դասակարգելու հիմնավորվածությունը:
- Ռիսկերի որոշակի ընտրանքի համար ստուգվել է Բանկի փուլավորման ճշտությունը:
- Գնահատվել է թեստավորվել են մոդելավորման էական ենթադրությունները՝ կենտրոնանալով Բանկի կողմից ընդունված մոդելավորման առանցքային ենթադրությունների վրա, և պահուստների զգայունությունը մոդելավորման ենթադրությունների փոփոխությունների նկատմամբ:
- Բանկի ղեկավարության կողմից ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկներում օգտագործված կանխատեսվող ենթադրությունների հետ կապված քննարկումներ են անցկացվել ղեկավարության հետ, որի ընթացքում ենթադրությունները հաստատվել են՝ օգտագործելով հանրամատչելի տեղեկատվությունը:
- Ուսումնասիրվել են ռիսկերի ընտրանքային օրինակներ և իրականացվել ընթացակարգեր՝ վարկային որակի էական վատթարացման ռիսկերի ժամանակին բացահայտելու և անհատապես գնահատված ռիսկերի գծով ակնկալվող կորուստների հաշվարկը գնահատելու նպատակով:
- Ստուգվել է 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի հաշվարկում ընդգրկված վարկերի, արտահաշվեկշռային հոդվածների, ներդրմային արժեթղթերի, տեղաբաշխումների և այլ ֆինանսական ակտիվների ամբողջականությունը: Ստուգվել են կիրառված մոդելների տեսական հիմքերը, և թեստավորվել է դրանց մաթեմատիկական ամբողջականությունը:

Grant Thornton

- Արտաքին աղբյուրներից ստացվող տվյալների մասով վերանայվել է նման տվյալների ընտրության գործընթացը, Բանկի համար դրա տեղին լինելը և նման տվյալների նկատմամբ վերահսկողության ու կառավարման մեխանիզմը:
- Մեր SS ոլորտի մասնագետները ներգրավվել են հատուկ փորձառություն պահանջող ոլորտներում (օրինակ՝ տվյալների հուսալիություն և այլն):

Գնահատվել է ֆինանսական հաշվետվություններում բացահայտումների ճշգրտությունը:

Այլ տեղեկատվություն

Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Այլ տեղեկատվությունը բաղկացած է Բանկի՝ 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար տարեկան հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվությունից, սակայն չի ներառում ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը: Ակնկալվում է, որ տարեկան հաշվետվությունը մեզ հասանելի կլինի սույն աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո:

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք դրանց վերաբերյալ որևէ ձևի հավաստիացման եզրակացություն չենք արտահայտելու:

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված մեր պարտավորությունն է ծանոթանալ վերը նշված այլ տեղեկատվությանը, երբ այն հասանելի լինի մեզ՝ որոշելու համար, թե արդյոք առկա են էական անհամապատասխանություններ այլ տեղեկատվության և ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում ձեռք բերված մեր գիտելիքների միջև, կամ արդյոք այլ տեղեկատվությունը պարունակում է այլ էական խեղաթյուրումներ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄԱ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Բանկի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Բանկը լուծարելու կամ Բանկի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձից պատասխանատու են Բանկի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի՝ լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր



Grant Thornton

կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման դիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման դիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:

- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Բանկի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Բանկի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Բանկին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հավաստիացում, որ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի համապատասխան պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա և, որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդակցած հարցերից որոշում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և, հետևաբար, աուդիտի առանցքային հարցեր են: Մենք նկարագրում ենք այդ հարցերը մեր աուդիտորական եզրակացությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ այլ իրավական ակտերով արգելված է այդպիսի հարցերի հրապարակային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում մենք որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորական եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքներն ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Աուդիտորական առաջադրանքի պատասխանատուն, որի արդյունքում ներկայացվում է սույն աուդիտորական եզրակացությունը հանդիսանում է Նաիրա Ուլունցը:

Արմեն Հովհաննիսյան

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի տնօրեն

Նաիրա Ուլունց

Առաջադրանքի պատասխանատու

29 ապրիլի, 2025թ



ԲԱՆԿԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերությունը դինամիկ զարգացող նորարարական բանկ է, որն իր հաճախորդներին մատուցում է մանրածախ և կորպորատիվ բանկային ծառայությունների լայն տեսականի: Բանկն իր առաքելությունն է համարում. նպաստել ՀՀ տնտեսության զարգացմանը, բարելավել իր հաճախորդների, բաժնետերերի և գործընկերների ֆինանսական վիճակը, ինչպես նաև բավարարել բնակչության պահանջարկը բարձրորակ ֆինանսական ծառայությունների նկատմամբ:



Յունիբանկը ձգտում է դառնալ ունիվերսալ բանկ յուրաքանչյուր հաճախորդի համար՝ ընդլայնելով իր գործունեության, առաջարկվող ծառայությունների և ապրանքների շրջանակը, առավելագույնս բավարարելով հաճախորդների կարիքները՝ ավելացնելով իր

ծառայությունների ծավալը և բարելավելով սպասարկման որակը:

Մեր արժեքներն են՝ հաճախորդների նկատմամբ ուշադիր և ազնիվ վերաբերմունք, ուժեղ թիմ և կատարողական, հանրային վստահություն, հեղինակություն, հուսալիություն և կայունություն:

Մենք ձգտում ենք՝ ամրապնդել մեր դիրքերը և մեծացնել մեր մասնաբաժինը ֆինանսական շուկայում, ապահովել բանկային ծառայությունների բարձր մշակույթ, բարձրացնել հանրաճանաչ և բարձր տեխնոլոգիական բանկային ծառայությունների մատչելիությունը, ներդնել թափանցիկ բիզնես մոդել և կորպորատիվ մշակույթի լավագույն փորձը, բարձրացնել բանկի ներդրումային գրավչությունը:

Բանկի ռազմավարությունն ուղղված է լինել **«ժողովրդական բանկի»**՝ որպես հանրապետության ամենատարածված ֆինանսական հաստատություններից մեկի դիրքերի ամրապնդմանը:

Բանկն իր հիմնական ռազմավարական նպատակն է համարում. Հայաստանի բանկային համակարգում իր դիրքի բարելավումը, բիզնեսի ծավալների և բարձր շահութաբեր հատվածների մասնաբաժնի ավելացումը, գործառնական արդյունավետությունը և աշխատանքի արդյունավետության ցուցանիշների բարելավումը, բիզնես գործընթացների ավտոմատացումը և օպտիմալացումը, ինչպես նաև ժամանակակից տեխնոլոգիաների և կառավարման մեթոդների ներդրումը:

Բանկի զարգացման նպատակներից մեկը նաև հաճախորդակենտրոն սկզբունքով մասնաճյուղերի և վաճառքի ուղիների զարգացումն է, որի վերջնական արդյունքը պետք է լինի ժամանակակից, տեխնոլոգիապես զարգացած բանկի ստեղծումը, որը կնպաստի տնտեսական

զարգացմանը և հաճախորդների բարեկեցությանը՝ մատուցելով մասնագիտական բանկային ծառայությունների ամբողջական շարք, երաշխավորելով աշխատակիցների լիարժեք մասնագիտական ինքնաիրացումը, պատշաճ վարձատրությունը և պահպանելով սոցիալական վստահությունը, Բանկի մասնակիցներին ապահովելով առավելագույն շահույթ՝ Բանկի կայունության բավարար մակարդակով, միաժամանակ գործելով օրենքին համապատասխան՝ առաջնորդվելով գործարար էթիկայի, կորպորատիվ մշակույթի և սոցիալական պատասխանատվության սկզբունքներով:

Բանկը մշտապես հետևում է տարբեր երկրներում կլիմայի փոփոխության և կայուն զարգացման հետ կապված իրադարձություններին, Կայուն զարգացման հիմնական նպատակների (ԿՁՆ) իրականացմանը, ներառյալ աղքատության և սովի դեմ պայքարին, որակյալ կրթության ապահովմանը, գենդերային հավասարությանը, պատասխանատու արտադրությանը և սպառմանը ուղղված ծրագրերին:



Ներկայումս կայուն զարգացման ESG սկզբունքներն ու մոտեցումները ներառված են Բանկի բիզնես գործընթացներում, իսկ կորպորատիվ ռազմավարության երկարաժամկետ վերափոխման հարցերը ներառված են Բանկի կառավարման մարմինների՝ Վարչության և Խորհրդի օրակարգում:

ESG սկզբունքների լիարժեք ներդրումը թույլ կտա գնահատել կայուն զարգացման առաջընթացն ու ռիսկերը որպես վերջնական նպատակ:

Ընդգծելով Բանկի ընթացիկ գործունեության և ռազմավարական զարգացման ծրագրում միջազգային լավագույն փորձի ներդրման և ինտեգրման անհրաժեշտությունը՝ Բանկի Խորհուրդը նախաձեռնել է ESG սկզբունքների ներդրման և կորպորատիվ կառավարման մշակույթի բարելավման նախագիծ, որն իրականացվում է ESG նախագծերի իրականացման փորձ ունեցող արտաքին խորհրդատվական ընկերությունների ներգրավմամբ: Սա հնարավորություն կտա բարելավելու Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC) ղեկավարությամբ մշակված և Բանկում ներդրված շրջակա միջավայրի և սոցիալական կառավարման համակարգը (ESMS): Բանկը, որպես ուղեցույցային փաստաթուղթ, նաև դիտարկում է 2024 թվականին Հայաստանի կենտրոնական բանկի կողմից հրապարակված Կլիմայի և ESG ռիսկերի գնահատման մեթոդաբանությունը՝ Risk Radar-ը:

Agents For Impact միջազգային ընկերության աջակցությամբ իրականացվող նախագիծը

ներառում է Բանկում ESG գործընթացների փուլային ներդրում, այդ թվում՝ ESG գծով տեղեկատվության բացահայտման գործողությունների պլանի, քաղաքականության և մեթոդաբանության մշակումը, անձնակազմի վերապատրաստումը և վարկանիշի շնորհումը: Նախագիծն ընդգրկում է նաև Բանկում Ազդարարման քաղաքականության և համակարգի, Հակակոռուպցիոն քաղաքականության, Կադրային քաղաքականության, Բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգերի, վարկավորման գործընթացում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, բարձր ռիսկեր ունեցող բնապահպանական ոլորտների վարկավորումը սահմանափակող համակարգի բարելավման միջոցառումները:

Բանկը ոչ միայն ձգտում է գործել որքան հնարավոր է «կանաչ» և «էկոլոգիապես մաքուր», այլև հետևողականորեն զարգացնում է բոլոր երեք ոլորտները (շրջակա միջավայրի պաշտպանություն, սոցիալական քաղաքականություն և կորպորատիվ կառավարում):

Բանկի ղեկավարությունը մշտապես պատասխանատու վերաբերմունք է ցուցաբերել շրջակա միջավայրի նկատմամբ՝ նպաստելով հասարակության համար բարենպաստ պայմանների ստեղծմանը և կյանքի որակի բարելավմանը:

Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը նվազեցնելու համար վերջին տարիներին Բանկը գրեթե բոլոր ծառայողական մեքենաները փոխարինել է էլեկտրական մեքենաներով, Բանկի տվյալների կենտրոնն արդեն աշխատում է արևային էներգիայով, իսկ թվային տեխնոլոգիաների ինտեգրման, ներքին հաղորդակցություններում էլեկտրոնային փաստաթղթերի կառավարման համակարգի կիրառման շնորհիվ, Բանկում գրեթե կիսով չափ կրճատվել է թղթի սպառումը:

Բանկն իր բիզնես մոդելով մշտապես ձեռնպահ է մնացել սոցիալական և բնապահպանական ռիսկեր պարունակող նախագծերի ֆինանսավորումից: Հետևելով շրջակա միջավայրի պաշտպանության սկզբունքներին՝ վարկային ծրագրեր իրականացնելիս Բանկը հաշվի է առնում այն փաստը, որ նախագիծը համապատասխանում է շրջակա միջավայրի պաշտպանության չափանիշներին և ձգտում է ապահովել, որ վարկային պորտֆելի առնվազն 80%-ը համապատասխանի «կանաչ» ֆինանսավորման չափանիշներին:

Բանկը խթանում է կանանց ձեռներեցության զարգացումը, վարկավորում է վերականգնվող էներգիայի և էներգաարդյունավետության ոլորտում նախագծեր, ինչպես նաև արտադրության արդիականացում:



Համաձայն սոցիալական պատասխանատվության սկզբունքների՝ Բանկը հոգատարություն է ցուցաբերում բոլոր շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ հաճախորդների, աշխատակիցների և

գործընկերների նկատմամբ, ակտիվ մասնակցություն է ունենում երկրի հասարակական կյանքում՝ իր ջանքերն ուղղելով ենթակառուցվածքների զարգացմանը և նոր աշխատատեղերի ստեղծմանը, բարեգործական և հովանավորչական ծրագրերին, որոնք ուղղված են կրթության, մշակույթի և սպորտի զարգացմանը, ինչպես նաև բնակչության ֆինանսական գրագիտության մակարդակի բարձրացմանը:

Բանկը կենտրոնանում է մարդու իրավունքների և հավասար զբաղվածության հնարավորությունների վրա՝ բացառելով գենդերային սահմանափակումները: Պատահական չէ, որ Բանկում կառավարչական պաշտոնների ավելի քան 40%-ը զբաղեցնում են կանայք, կանայք նաև Բանկի կառավարման մարմինների՝ Խորհրդի և Վարչության անդամներ են:

Բանկը ստեղծում է հարմարավետ միջավայր իր աշխատակիցների համար, վերջիններիս համար ներդրվել է առողջության ապահովագրության համակարգ: Բանկի կադրային քաղաքականությունը միտված է պրոֆեսիոնալ և մոտիվացված թիմի ձևավորմանը և պահպանմանը: Բանկը ֆինանսավորում է աշխատակիցների մասնակցությունը միջազգային և տեղական միջոցառումներին, վերապատրաստումներին և կոնֆերանսներին, միջազգային վկայականների և որակավորումների ձեռքբերումները: 2024 թվականի Բանկի աշխատակիցներն ու ղեկավարները մասնակցել են ESG և կայուն զարգացման սկզբունքներին վերաբերող տարբեր վերապատրաստումների և սեմինարների, Բանկի ավելի քան 100 աշխատակից ստացել է որակավորման վկայականներ, այդ թվում՝ միջազգային:

ՇԱՀԱԳՐԳՈՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՄԲ (ՓՈՒՍԿԱՊԱԿՑՎԱԾ) ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Վերջին մեկ տարվա ընթացքում Բանկը փոխկապակցված անձանց հետ չի կնքել այնպիսի գործարքներ, որոնց արժեքը գերազանցում է Բանկի սեփական կապիտալի 1%: Վերջին մեկ տարվա ընթացքում Բանկը փոխկապակցված անձանց հետ չի կնքել ոչ բնականոն գործունեության շրջանակում այնպիսի գործարքներ, որոնց արժեքը գերազանցում է 10 միլիոն ՀՀ դրամը:



ԲԱՆԿԻ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԶԵԿՈՒՅՑԸ



Կորպորատիվ կառավարման նպատակն է թափանցիկության, վստահության, բարեվարքության և հաշվետվողականության միջավայրի ձևավորման միջոցով աջակցել դեպի Բանկ երկարաժամկետ ներդրումների ներգրավմանը, ֆինանսական կայունությանը, խթանել եկամուտների ավելի մեծ ծավալով աճը, ինչպես նաև նպաստել որոշումների կայացման գործընթացում հանրության ներգրավվածությանը:

Ներդրողները և այլ շահակիցները Բանկի կապիտալում ներդրումներ կատարելիս պետք է համոզված լինեն, որ.

- Բանկը գործում է բաց ու թափանցիկ,
- ունի կառավարման և վերահսկման (այդ թվում՝ ներքին հսկողության, ռիսկերի կառավարման և հաշվետվողականության) պատշաճ համակարգեր,
- որոշումներ կայացնող անձանց փորձառությունն ու հմտությունները հնարավորություն են տալիս ընդունել Բանկի, դրա բաժնետերերի ու այլ շահակիցների շահերից բխող անաչառ ու հավասարակշռված որոշումներ, ստանձնել դրանց համար պատասխանատվություն, ապահովել Բանկի իրավական և էթիկական համապատասխանությունը:

Կորպորատիվ կառավարումը Բանկում բաշխում է լիազորությունները և պարտականությունները,

որոնց միջոցով Բանկի խորհուրդն ու ավագ ղեկավարությունն իրականացնում են իրենց գործունեությունը, ներառյալ, թե ինչպես են նրանք.

- 1) սահմանում Բանկի ռազմավարությունն ու խնդիրները.
- 2) ընտրում և հսկում անձնակազմին.
- 3) օրական կտրվածքով իրականացնում Բանկի բիզնեսը.
- 4) պաշտպանում ավանդատուների շահերը, բավարարում բաժնետերերի նկատմամբ պարտավորությունները և հաշվի առնում այլ շահագրգիռ կողմերի շահերը.
- 5) համապատասխանեցնում կորպորատիվ մշակույթը, կորպորատիվ գործունեությունը և վարքն այն ակնկալիքին, որ Բանկը գործելու է անվտանգ և ապահով կերպով, բարեխղճորեն և գործող օրենսդրությանը համաձայն.
- 6) ստեղծում վերահսկման գործառույթներ:

Բանկը գիտակցում է, որ լավ կորպորատիվ կառավարումը կարող է ստեղծել հետևյալ **մրցակցային առավելությունները.**

- 1) ավելի մեծ հասանելիություն արտաքին ֆինանսավորմանը, ինչը կարող է հանգեցնել ավելի մեծ ներդրումների, ավելի մեծ աճի և ավելի շատ աշխատատեղերի ստեղծման: Այսօր ներքին և միջազգային ներդրողները հաճախ խուսափում են այն բանկերից, որոնք չեն երաշխավորում ներդրողների իրավունքները, չեն ապահովում կորպորատիվ տեղեկատվության պատշաճ բացահայտում և Խորհրդի հուսալի գործունեություն,
- 2) կառավարման համակարգում անկախ, արհեստավարժ և արդյունավետ խորհուրդների դերակատարման ընդլայնում,
- 3) ավելի լավ օպերացիոն կատարողական՝ ռեսուրսների ավելի արդյունավետ բաշխելու և ավելի լավ ղեկավարելու միջոցով,
- 4) ավելի ցածր ռիսկեր,
- 5) բոլոր շահագրգիռ կողմերի միջև ավելի լավ հարաբերություններ, ինչի արդյունքում բարելավվում են աշխատանքային հարաբերությունները,
- 6) անվտանգ ու ապահով լինելով դառնալ ավելի ֆինանսապես կայուն, որն էլ մեծ նշանակություն ունի տնտեսության առողջության ու կայունության համար:

Բանկի կորպորատիվ կառավարման զեկույցն իր մեջ ներառում է **Հավելվածներ 1-ից 9-ում** ներկայացված հետևյալ տեղեկատվությունը.

Հավելված 1. Բանկի վարչակազմակերպական և կորպորատիվ կառուցվածքի նկարագրությունը,

Հավելված 2. Նշանակալից մասնակիցների, այդ թվում՝ իրական շահառուների մասին տեղեկատվությունը,

Հավելված 3. խորհրդի անդամների հակիրճ կենսագրությունը,

Հավելված 4. Գործադիր մարմնի (անհատական կամ ընդհանուր) տարեկան վարձատրության վերաբերյալ տեղեկատվությունը և վարձատրության կապը կայունության կորպորատիվ թիրախների հետ,

Հավելված 5. Բանկի բաժնետոմսերի քանակը, որոնք հանդիսանում են խորհրդի և գործադիր մարմնի անդամների սեփականությունը,

Հավելված 6. Աուդիտորական կազմակերպության անվանումը և վարձատրությունը, ինչպես նաև դրա անկախության փաստի ստուգման արդյունքները,

Հավելված 7. Բանկի կողմից թողարկված և տեղաբաշխված բաժնետոմսերով ամրագրվող իրավունքները՝ ըստ դրանց տեսակների (դասերի),

Հավելված 8. Կորպորատիվ կառավարման վերաբերյալ Բանկին և խորհրդին խորհրդարարական ծառայություններ, այդ թվում՝ խորհրդի գնահատման, խորհրդի անդամի ներգրավման գծով ծառայություններ մատուցած անձանց մասին տեղեկատվությունը և վարձատրությունը,

Հավելված 9. Կորպորատիվ կառավարման տարեկան հայտարարագիրը:

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ կորպորատիվ կառուցվածքը հետևյալն է.

- ա. Բաժնետերերի ընդհանուր ժողով,
- բ. Խորհուրդ,
- գ. կոլեգիալ գործադիր մարմին՝ Վարչություն,
- դ. միանձնյա գործադիր մարմին՝ Վարչության նախագահ:

Հավելված 2. Նշանակալից մասնակիցների, այդ թվում՝ իրական շահառուների մասին տեղեկատվություն



Բանկի խոշոր բաժնետերն է Կիպրոսում գրանցված Յունիհոլդինգ ՋիՋի Լիմիթեդ Ընկերությունը - 83.6% (հասցեն՝ Կիպրոս, Նիկոսիա, Պատմու 5Բ, Ագլաթզիա, ՓԱ 2103), որը հանդիսանում է 155,532,640 հատ սովորական անվանական բաժնետոմսերի և 32,010,000 հատ հաստատագրված տարեկան շահութաբաժնով Ա դասի արտոնյալ

բաժնետոմսերի սեփականատերը: Յունիհոլդինգ ՋիՋի Լիմիթեդ Ընկերությանը պատկանող Բանկի սովորական անվանական բաժնետոմսերը տալիս են ձայնի միևնույն իրավունք: Գագիկ Զաքարյանը և Գեորգի Պիսկովը հանդիսանում են «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ խոշոր բաժնետիրոջ՝ Յունիհոլդինգ ՋիՋի Լիմիթեդ Ընկերության իրական շահառուները:

Բանկի անուղղակի նշանակալից մասնակից Գլորիսքայ Էնջինիրինգ Լիմիթեդում կատարված բաժնեմասերի առուվաճառքի արդյունքում Գագիկ Զաքարյանին պատկանող բաժնեմասը կազմում է 75.5%, իսկ Գեորգի Պիսկովինը՝ 24.5%:

Հավելված 3. Խորհրդի անդամների հակիրճ կենսագրությունը



Գագիկ Տիգրանի Զաքարյան՝ ոչ գործադիր անդամ

Ծննդյան տարեթիվը՝ 09.04.1965թ.

Կրթությունը՝

1982-1988թթ.՝ ՄԱԻ, բարձրագույն կրթություն, ինքնաթիռաշինություն
2003-2004թթ.՝ Մոսկվայի միջազգային ֆինանսաբանկային դպրոց, պրոֆեսիոնալ թրեյդերի վկայական:

Աշխատանքային գործունեությունը վերջին 10 տարվա ընթացքում՝

2008թ.-ից առ այսօր՝ «Ռեզո Ինշուրանս» ԱՓԲԸ (ՀՀ), Տնօրենների խորհրդի նախագահ

2001թ.-ից առ այսօր՝ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ (ՀՀ), համահիմնադիր, Խորհրդի նախագահ:

Փորձառությունը՝ 32 տարի:

Գագիկ Զաքարյանը հանդիսանում է Խորհրդին կից Ներդրումային հանձնաժողովի անդամ:



Գեորգի Իգորի Պիսկով՝ ոչ գործադիր անդամ

Ծննդյան տարեթիվը՝ 31.10.1963թ.

Կրթությունը՝

1987թ.-ին ավարտել է ՄԱԻ, ինժեներ - սիստեմատեխնիկ

2000թ.-ին ավարտել է Ներդրումային կառավարման և հետազոտությունների ինստիտուտը, Մեծ Բրիտանիա, «Ներդրումների կառավարում» վկայագիր

2005թ.-ին ավարտել է Գ. Վ. Պլեխանովի անվան Ռուսաստանի տնտեսագիտական ակադեմիան, տնտեսագիտական գիտությունների թեկնածու:

Աշխատանքային գործունեությունը վերջին 10 տարվա ընթացքում՝

2014թ.-ից առ այսօր՝ «MoneyTO» ՍՊԸ, հիմնադիր

2002թ.-ից առ այսօր՝ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ (ՀՀ), համահիմնադիր, Խորհրդի անդամ:

Փորձառությունը՝ 32 տարի:

Գեորգի Պիսկովը հանդիսանում է Խորհրդին կից Ներդրումային հանձնաժողովի, ինչպես նաև Ռիսկերի կառավարման հանձնաժողովի անդամ:



Հրահատ Մամիկոնի Արզումանյան՝ ոչ գործադիր անդամ

Ծննդյան տարեթիվը՝ 30.12.1965թ.

Կրթությունը՝

1990թ.-ին գերազանց ավարտել է Ն. Բաումանի անվան ՄՊՏՀ,
1994թ.-ին՝ ասպիրանտուրան

2002թ.-ին գերազանց ավարտել է Ֆինանսական ակադեմիան:


Աշխատանքային գործունեությունը վերջին 10 տարվա ընթացքում՝

2014թ.-ից առ այսօր՝ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ (ՀՀ), Խորհրդի անդամ

2014թ.-ից առ այսօր՝ «Տրանսստրոյբանկ» ԲԱԲ ԲԸ, Տնօրենների
խորհրդի նախագահ, փոխնախագահ:

Փորձառությունը՝ 27 տարի:

*Հրահատ Արզումանյանը հանդիսանում է Խորհրդին կից Աուդիտի
հանձնաժողովի, ինչպես նաև Կադրերի և պարզապարույնների
հանձնաժողովի անդամ:*



Վարդան Գրենայի Աթայան՝ ոչ գործադիր անդամ

Ծննդյան տարեթիվը՝ 05.05.1969թ.

Կրթությունը՝

1990թ.-ին ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության
ինստիտուտը

1995թ.-ին ավարտել է Վիեննայի Միացյալ Ինստիտուտը (շուկայական
տնտեսության և ֆինանսական վերլուծության դասընթաց):

Աշխատանքային գործունեությունը վերջին 10 տարվա ընթացքում՝

2018թ.-ից առ այսօր՝ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ (ՀՀ), Խորհրդի անդամ

2017-2018թթ.՝ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ (ՀՀ), Խորհրդի նախագահի
խորհրդական

2001-2017թթ.՝ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ (ՀՀ), Վարչության նախագահ:

